## «ՕԽՏԸ ԴՌՆԻ» ՎԱՆՔԸ

Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Հադրութի շրջանը հարուստ է հայկական պատմական և ճարտարապետական հուշարձաններով, որոնց թվում կան խոր հնության օրինակներ:

«Օխտը դռնի» անունը կրող երկու վանքերից մեկը գտնվում է Տումի գյուղի տարածքում, մյուսը՝ Գտչավանքի մոտերքում, Մոխրենիս գյուղից 3.5 կմ-ի վրա:

Լեռն իր ժամանակին ուխտավորների հետ այցելել է «Օխտը դռնի» վանք. նա այդ տեղանքն անվանում է Զկռատափ: Այդ անունը, թերևս, կապված է շրջակա անտառներում զկեռի ծառերի առկայության հետ:

«Զկռատափ: Օխտը-դռնի» գլխագրով պատմվածքում Լեռն գրում է. «Մենք դուրս եկանք մեծ ճանապարհից և նախ արտերի միջով, ապա հսկայական ծառերի տակով գնալով հասանք մի բլրի, ուր և տեսանք Օխտը-դռնին: Դա մի շատ հին շինություն է՝ վերևիցը բաց: Սողալով ներս մտանք մի փոքրիկ ծակով, որ դռան տեղ է ծառայում: Շինության ներսը ներկայացնում է յոթն կանոնավոր կիսաբոլորակ խորանաձև բաժանմունքներ, որոնք բաժանվում են միմյանցից պատերի սյունաձև հավելվածներով: Յոթն բաժանմունքներից էլ ստացել է իր անունը այդ ուխտատեղին (Յոթն դռնանի): Յոթն բաժանմունքներում այրվում էին բազմաթիվ մոմեր: (Այդտեղ ուխտ գնացողը անպատճառ պիտի ունենա յոթ մոմ): Պատերը բոլորովին սևացած էին ծխից. մի տառ անգամ չկարողացա գտնել նրանց վրա: Այդ կողմերի ավերակների և կանգուն եկեղեցիների այժմյան կենդանի բնակիչը և հարևանը՝ Առաքել վարդապետը, ասում էր, որ այստեղ թաղված են յոթ խոտաճարակները, որոնց տոնում է մեր եկեղեցին: Թե որքանով ստույգ է այդ, չգիտեմ:

Այս ուխտատեղին գտնվում է մի անսովոր գեղեցիկ տեղ»[1]:

Այդ հուշարձանին նվիրված «Մոխրենիսի «Օխտը դռնի» վանքը» վերնագրով իրենց համատեղ ուսումնասիրությունն են հրատարակել Շահեն Մկրտչյանը, Ռաֆիկ

---

[1] Լեռ, *Երկերի ժողովածու 10 հատորով. Ութերորդ հատոր*, Երևան, «Սովետական գրող», 1985, էջ 26-27:

Աբգարյանը և Սամվել Կարապետյանը[2]: Առընթեր ներկայացված են չափագրության նյութեր, կատարված Ռ. Աբգարյանի և Գ. Դարբինյանի կողմից, ինչպես և ավերակ հուշարձանի լուսանկարներ:

Ուսումնասիրության հեղինակները գրում են. «... Եկեղեցին հետաքրքիր է ... այն առումով, որ իր հատակագծով առ այսօր միակը լինելով պատմական Արցախ նահանգում, պատկանում է գիտական գրականության մեջ անվանված «Ավան-Հռիփսիմեի» տիպի սակավաթիվ հուշարձանների ընտանիքին և անշուշտ պետք է դիտարկվի հենց այդ կառույցների հետ բաղդատելով»[3]: «Օխտը դռնին» Ավան-Հռիփսիմեի տիպի տաճարների ընտանիքին վերագրելու հարցում հեղինակները միանգամայն ստույգ են և դրականորեն գնահատելի է նրանց աշխատանքը այդ հետաքրքիր հուշարձանը գիտական շրջանառության մեջ դնելու առումով: «... ճարտարապետական ձևերի, զարդաքանդակների և տարածա-ծավալային մանրամասն դիտարկումը ...» հետազոտողներին թույլ է տվել հուշարձանի կառուցման ժամանակը նշել 5-րդ դարը[4]:

Այս նույն հուշարձանի վերաբերյալ Հայ արվեստին նվիրված չորրորդ միջազգային սիմպոզիումի զեկուցումների թեզերում[5] բերված է Մ. Հասրաթյանի կարծիք-տեսությունը Ավան-Հռիփսիմեի տիպի հուշարձանների վերաբերյալ, ուր հեղինակը մասնավորապես գրում է. «Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք հարում են նախօրինակին – Մոխրենիսի եկեղեցուն»:[6] Համաձայն Մ. Հասրաթյանի, «Իր զարգացման ընթացքում այդ աստղաձև կոմպոզիցիան անկյունային սենյակների հավելու-

---

[2] Շահեն Մկրտչյան, Ռաֆիկ Աբգարյան, Սամվել Կարապետյան, «Մոխրենիսի «Օխտը դռնի» վանքը», *Էջմիածին*, 1982, ԺԱ-ԺԲ, էջ 46-50, նաև՝ Շ. Մկրտչյան, *Լեռնային Ղարաբաղի հուշարձանները*, Երևան, 1985, էջ 87-90:

[3] Շահեն Մկրտչյան, Ռաֆիկ Աբգարյան, Սամվել Կարապետյան, «Մոխրենիսի «Օխտը դռնի» վանքը», էջ 46-47:

[4] Նույն տեղում, էջ 47:

[5] М. М. Асратян, “Новооткрытая церковь Мохрениса и генезис памятников типа тетраконха с угловыми нишами”, в кн.: *Четвертый международный симпозиум по армянскому искусству - тезисы докладов*. Ереван, 1985, с. 35-38: Նույնի՝ *Очерк армянской архитектуры*, М.:, 1985, էջ 48-49:

[6] М. М. Асратян, “Новооткрытая церковь Мохрениса и генезис памятников типа тетраконха с угловыми нишами”, էջ 38:

մով բարդացվել է, որը և բերել է իրենց ճարտարապետական պատկերներով մեկը-մյուսից զգալապես տարբերվող եկեղեցական շենքերի առաջացման»:[7]

Մ. Հասրաթյանը 38-րդ էջում գրում է. «Ամբողջ տիպի այդ ելակետային հուշարձանը, որ կանխել է մնացած անկյունային խորշերով քառախորաններին, կարելի է ժամանակագրել ոչ ուշ, քան 6-րդ դարի երրորդ քառորդը»: Վերոհիշյալը հնարավորություն է տվել Մ. Հասրաթյանին գրելու «Մոխրենիսի եկեղեցին ... ոչ միայն լրացնում և հարստացնում է տվյալ տիպի հուշարձանների շարքը, այլ և ստիպում է վերանայել անկյունային երեք-քառորդ խորշերով քառախորանների ծագման ու զարգացման պատմությունը»:[8]

Մինչև Մոխրենիսի «Օխտը դռնի» վանքի գիտական շրջանառության մեջ մտնելը, հայ (նաև վրաց) ճարտարապետության հուշարձանների ուսումնասիրությանը նվիրված գրականության մեջ ընդունված էր, որ ներքին, անկյունային ուղղության ¾ խորշերով աստղաձև քառախորանները (տետրակոնխերը) Ավան-Հռիփսիմե տիպի տաճարների պարզեցումներ են[9] անկյունային սենյակներից (ավանդատներից) հրաժարվելու միջոցով, և որ այդպիսիք չեն կարող ավելի վաղ կառուցված լինել, քան տիպի հիմնական օրինակները, ի դեմս Ավանի, որ տվյալ տիպի մեզ հայտնի կառուցվածքներից առաջինն է[10]:

Այսպիսով պարզ է դառնում երկու տեսակետների տրամագծորեն հակառակ լինելը: Արդ, ո՞րն է ճիշտը, գիտականորեն տրամաբանականը. աստղա՞ձևն է (¾ խորշերով) ավանդատներ ստանալով բարդացել և որպես արդյունք առաջացել է տաճարների Ավան-Հռիփսիմեի տիպը, թե՞ հակառակը՝ Ավան-Հռիփսիմեի տիպը պարզեցվել՝ ավանդատներից ազատվել, և որպես արդյունք առաջացել է աստղաձևը (¾ խորշերով):

Հասկանալի է, որ սովորական դեպքերում սկզբից լինում է պարզը, ապա զարգացումը տանում է դեպի բարդը: Սակայն տվյալ դեպքում ¾ խորշերով աստղաձևը

---

[7] Նույն տեղում, էջ 35:
[8] Նույն տեղում, էջ 35:
[9] Г. Н. Чубинашвили, *Памятники типа Джвари*, Тбилиси, 1948, էջ 33-44:
[10] Տիրան Մարության, *Ավանի տաճարը*, Երևան, 1976, էջ 5-45:

պարզ բջիջ չէ, ստեղծված ի սկզբանե, այն ինքնին պարզ քառախորանի հետագա բարդացումն է ¾ խորշերի հավելումով, այն էլ ոչ անմիջականորեն: Հայտնի է, որ ճարտարապետության մեջ ձևերը առաջանում են ոչ ինքնանպատակ, այլ որոշակի պահանջների դրդմամբ, հիմնավոր անհրաժեշտության դեպքում միայն: Արդ պետք է պարզել, թե եկեղեցական արարողության որ մի պահանջի, հատկապես մշակված որ մի կանոնի բավարարման ուղղությամբ տարված աշխատանքի արդյունք է ¾ խորշերի հավելումը պարզ քառախորանի կուռ օրգանիզմում: Պարզ քառախորանը իրականում ¾ խորշերի այդ կարգի անհրաժեշտություն չի ունեցել, սրան հակառակ Մ. Հասրաթյանը գրում է. «Այդ խորշերը ունեն մի քանի նշանակություն. <u>նրանց գլխավոր դերը – գմբեթատակ քառակուսու մեծացումն է խորանների մաքսիմում չափերի պահպանմամբ</u>: Նրանք ապահովում են նաև անցումը անկյունային սենյակներ, ուժեղացնում են գմբեթատակ քառակուսու անկյունները, հարստացնում են ներքնատեսքի (ինտերիերի) ռիթմը և ընդգծում ուղղաձիգությունը նրանում, որը արտաքուստ թույլ է արտահայտված»[11]:

Ա. Յակոբսոնը ¾ խորշերի մասին գրում է. «<u>Միջանկյալ երեք-քառորդ նեղ խորշերը տանում են անկյունային սենյակներ</u>. այդ խորշերը ունեն նաև կոնստրուկտիվ նշանակություն, մարելով գմբեթի հորիզոնական ճիգերը, անկասկած է և այն, որ նրանք հարստացնում են ինտերիերի ռիթմը և ուժեղացնում են նրանում ուղղաձիգը, որը արտաքուստ շատ թույլ է արտահայտված»[12]: Ինչպես տեսնում ենք, թե՛ Մ. Հասրաթյանը, թե՛ Ա. Յակոբսոնը գրեթե նույն բառերով են շարադրում ¾ խորշերի վերաբերյալ իրենց կարծիքները, սակայն նրանք, ըստ էության բոլորովին տարբեր բաներ են ասում դրանց առաջնային և երկրորդային նշանակության վերաբերյալ: Մ. Հասրաթյանը, ինչպես ընդգծեցինք, ¾ խորշերի գլխավոր դերը համարում է գմբեթատակ քառակուսու մեծացումը, որը ակներև սխալ է (ավելի մանրամասն հետո), մինչ Ա. Յակոբսոնը նախ

[11] М. М. Асратян, “Новооткрытая церковь Мохрениса и генезис памятников типа тетраконха с угловыми нишами”, էջ 35:
[12] А. Л. Якобсон, Проблема закономерности в развитии средневековой архитектуры, в кн: *Кавказ и Византия, выпуск 3*, Ереван, 1982, էջ 162:

և առաջ այդ խորշերի դերը համարում է անկյունային սենյակներ տանելը, այն անցումը, որով մեծ աղոթասրահն ու անկյունային սենյակները կապում են միմյանց հետ:

Իհարկե, կան ավանդատներով քառախորաններ, որոնցում ավանդատների մուտքերը բացվում են հյուսիսային, հարավային և արևմտյան խորաններից, մի բան, որ մի քանի առումով անհարմար լուծում է. չէ որ բոլոր խորաններն էլ տրամադրվում են եկեղեցական արարողության իրագործմանը: Ի տարբերության հիշյալ քառախորանների, ավանատիպ տաճարներում մուտքերը կազմակերպվում են անկյունագծով, խորանները ազատելով անցուդարձի ասպարեզ լինելուց:

Որ ¾ խորշերը հիմնականում հանդիսանում են անցում և մուտք ավանդատները գնալու և այնտեղից կենտրոնական աղոթասրահ վերադառնալու համար, առարկություն չի վերցնում, և այդ կարծիքը բաժանում են ավանատիպ տաճարների ուսումնասիրությամբ զբաղվող բոլոր մասնագետները, այդ թվում նաև Մ. Հասրաթյանը: Ահավասիկ Հ. Խալփախչյանը Ճարտարապետության մեծ հանրագիտարանում[13] Ավանին անդրադառնալով, գրում է. «Գմբեթատակ խաչմերուկի անկյունները ընդարձակված են երեք-քառորդ սենյակներով, որոնք ծառայում են որպես անցումներ բոլորակ ավանդատները գնալու համար: Նրանում առաջին անգամ կենտրոնագմբեթ շինության ներսում արևմտյան կողմում ստեղծվել են ավանդատներ և հատակագծում երեք-քառորդ անցումներ այդ ավանդատները գնալու համար»:

Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը նույն առիթով գրում են. «Չորս անկյուններում առկա են բոլորակ հատակագծով ավանդատներ, որտեղ գմբեթատակ քառակուսուց ընկնում են, անցնելով հատակագծում երեք-քառորդ խորշերից, որ տեղադրված են անկյունագծերի ուղղությամբ»[14]:

---

[13] О. Х. Халпахчьян, “Архитектура Армении,” в кн.: *Всеобщая история архитектуры в 12 томах*, *том 3,* Ленинград-Москва, 1966, с. 216, 217:

[14] В. М. Арутюнян и С. А. Сафарян, *Памятники армянского зодчества*, М., 1951, с. 39. Տես նաև В. М. Арутюнян, *Каменная летопись армянского народа*, Ереван, 1985, էջ 35:

Վ. Հարությունյանը Հռիփսիմեի մասին գրում է. «Անկյունային ավանդատները, որ ի տարբերություն Ավանի տաճարի (որտեղ այդպիսիք բոլորակ են), քառակուսի են. այնտեղ տանում են անկյունագծերի վրա տեղավորված խորշերը»[15]:

Ն. Տոկարսկին նույն ձևով գրում է. «Բացի դրանից կենտրոնական քառակուսու ներքին անկյունները մշակված են այդ տիպի համար յուրահատուկ դռներ ունեցող երեք-քառորդ խորշերի ձևով, որ տանում են ավանդատները»[16]:

Ա. Երեմյանը Հռիփսիմեին նվիրված աշխատության մեջ գրում է. «Գմբեթատակ քառակուսու անկյունները մշակված են երեք-քառորդ խորշերի ձևով: Վերջիններս կապում են շինության կենտրոնական մասը անկյունների ուղղանկյունաձև սենյակնե-րի-ավանդատների հետ», «Այս կոմպոզիցիայում առաջին անգամ արևմտակողմում առաջանում են ուղղանկյուն սենյակներ, ինչպես և երեք-քառորդ խորշեր, որ տանում են անկյունային սենյակներ», «Լավ լուծում է ստացել նաև անկյունային սենյակների և տաճարի կենտրոնական մասի կապը, որը իրականացվում է ոչ անմիջականորեն, այլ երեք-քառորդ խորշերի միջոցով», «Նախորդից [Մաստարայից – Տ.Մ.] տարբերվող նոր լուծում է ստացել, նրանում գմբեթատակ քառակուսու անկյունները փոխակերպվել են երեք-քառորդ թմբկաձև խորշերի, որոնք սկսել են ծառայել անկյունային սենյակները գնալու անցումներ»[17]:

Այս հարցում նույնպիսի կարծիք ունի Ս. Մնացականյանը, որը գրում է. «Կենտ-րոնական քառակուսուց այդ սենյակներն են տանում չորս բոլորակ խորշեր՝ անցում-ներ, որոնք, ըստ էության խաղում են հենախորշերի դեր և ապահովում են բուն գմբեթի կայունությունը», «...Հենախորշերը-անցումները, որ տեղավորված են անկյունագծային ուղղությամբ...», «Կենտրոնական քառակուսուց դեպի այդ սենյակներն են տանում անկյունային դասավորություն ունեցող չորս, դարձյալ շրջագծային նախամուտքերը»[18]:

---

[15] В. М. Арутюнян, *Каменная летопись армянского народа*, Ереван, 1985, էջ 33-35:
[16] Н. М. Токарский, *Архитектура Армении IV-XIV вв.*, Ереван, 1961, էջ 121
[17] А. Б. Еремян, *Храм Рипсимэ*, Ереван, 1955, էջ 31, 72, 73, 87, 88:
[18] С. Х. Мнацаканян, К. Л. Оганесян, А. А. Саинян, *Очерки по истории архитектуры древнвй и средневековой Армении*, Ереван, 1978, էջ 94: Նույնի, *Ակնարկ հայ ճարտարապետության պատմության*, Երևան, 1964, գլուխ 4, էջ 146:

Ն. Սևերովը նույն տիպի հուշարձանները քննելիս, գրում է. «Խաչի անկյուններում տեղավորված էին քառակուսի, խաչվող թաղերով սենյակներ, որոնք միանում էին տաճարի հիմնական ծավալի հետ հատուկ անցումով գմբեթատակ քառակուսու անկյուններում»[19]:

Երեք-քառորդ խորշերը նույն գնահատությունն են ստանում նաև Գ. Չուբինաշվիլու գործերում: Նա գրում է. «Գմբեթատակ քառակուսու անկյուններում խաչաթևերի պատերի ծայրերի միջև ստեղծված են շրջանի ¾ խորշեր, որոնք տանում են ամեն զույգ խաչաթևերի միջև գտնվող սենյակները», «Ավանում և Հռիփսիմեում ինչպես և Թարգմանչացում ...անցումային երեք-քառորդ խորշերի դիրքը...»: «Գմբեթատակ քառակուսու կենտրոնից անկյունային սենյակներ գնալու անցումը կազմում են շրջանի երեք-քառորդ խորշերը, որոնք տեղադրված են քառակուսու անկյուններում, որտեղից առաջնորդում են դռներ»[20]:

Ա. Յակոբսոնը իր վերջին աշխատություններում նույն ձևով է որակում ¾ խորշերի դերը, գրելով. «Միջանկյալ ¾ խորշերը-էքսեդրները տանում են բոլորակ սենյակները»[21]:

Ահա և նորերս ընծայած աշխատության հեղինակ Մ. Հասրաթյանը գրում է. «Անկյունագծով տեղադրված խորշերը տանում են չորս բոլորակ ավանդատները շինության անկյուններում»[22]:

Ինչպես տեսնում ենք, ավանատիպ տաճարների հետազոտությամբ զբաղվող բոլոր մասնագետները ¾ խորշերին միաբերան անվանում են կապ և անցում տաճարի կենտրոնական տարածության և անկյուններում առկա ավանդատների միջև: Այս նշանակում է, որ ¾ խորշերը այդ նպատակով էլ ստեղծվել են: Այս միաժամանակ նշանակում է, որ ¾ խորշերը ի սկզբանե անհրաժեշտ է եղել ստեղծել այն քառախորաններում,

---

[19] П. Северов, *Памятники грузинского зодчества*, М., 1947, էջ 171:
[20] Г. Н. Чубинашвили, *Памятники ...*, էջ 32, 105: Նույնի՝ *Архитектура Кахетии*, Тбилиси, 1959, էջ 246:
[21] А. Л. Якобсон, *Закономерности в развитии средневековой архитектуры IX-XV вв.*, Ленинград, 1985, էջ 43, 49:
[22] Мурад Асратян, *Очерки армянской архитектуры*, М., 1985, էջ 49, 50:

որոնց խաչաթևերի միջև, այսինքն՝ անկյունագծերում առկա են եղել ավանդատներ, ասել է թե ¾ խորշեր չէին ստեղծվի, եթե քառախորաններում միաժամանակ գոյություն չունենային ավանդատներ: Այստեղից հետևում է, որ այն քառախորանները, որոնք անկյուններում սնեյակներ-ավանդատներ չունեն, սակայն ունեն ¾ խորշեր, պատկանելով Ավանի տիպին, հանդիսանում են հիմնական տիպի պարզեցումներ՝ անկյունային սենյակներից հրաժարվելու միջոցով: Այս տեսակ աստղաձև քառախորանները, հասկանալի է, չէին կարող կառուցվել ավելի վաղ, քան այն տաճարները, որոնք ունենալով ավանդատներ, առիթ են դարձել ¾ խորշերի ստեղծման:

Ճարտարապետության մեջ ձևերն առաջանում են անհրաժեշտությունից. սա ճարտարապետական ստեղծագործության տրամաբանությունն է: Ճարտարապետական երկը ստեղծվում է զգալի միջոցների ներդրմամբ և տքնաջան աշխատանքով, իսկ միջոցներ ներդրվում են անհրաժեշտության դեպքում միայն: Ճարտարապետության մեջ չհիմնավորված ցանկությունները չեն ֆինանսավորվում և իրականություն չեն փոխարկվում:

Արդ, քանի որ Մոխրենիսում թևերի միջև, այսինքն՝ անկյուններում սենյակներ-ավանդատներ չկան, նշանակում է սկզբնապես ¾ խորշերը Մոխրենիսում չեն առաջացել. այս միաժամանակ նշանակում է, որ Մոխրենիսը չի կարող համարվել ¾ խորշերով քառախորանների առաջնեկը-նախօրինակը, ինչպես մեծապես վրիպելով պնդում է Մ. Հասրաթյանը: Դեռ ավելին, նա առաջ անցնելով թույլ է տալիս անճշտություններ. «Այդ կոմպոզիցիայի տարբերող գիծը հանդիսանում է խորանների միջև հատակագծում ¾ խորշերի առկա լինելը, որով <u>առանց լրացուցիչ հենարանների զգալի չափով ընդլայնվում է ներքին տարածությունը և ստեղծվում է տաճարը վերևից առավել խոշոր գմբեթով ավարտելու հնարավորությունը</u>»[23]:

Իրականում այսպիսի երևույթ գոյություն չունի, այդ ապացուցող օրինակներ չկան, սակայն կան մեկից ավելի օրինակներ, որոնք իրենց գոյությամբ ժխտում են հետազոտողի այդ տեսությունը: Փաստ է, որ առանց ¾ խորշերի Մաստարան և Արթիկի

[23] Мурад Асратян, Очерк..., էջ 48:

կաթողիկեն ավելի մեծ չափերի գմբեթներ ունեն, քան ավանատիպ տաճարներից ամենամեծերը՝ Հռիփսիմեն, Աթենը, Ջվարին:

Հնարավոր ենք համարում այստեղ չանդրադառնալ ¾ խորշերին վերագրվող մյուս բարեմասնություններին, նկատի ունենալով, որ այդպիսիք կարևորի, առաջնայինի ածանցյալներն են:

Այն, ինչ որ ասվեց Մոխրենիսի մասին, ամբողջապես վերաբերում է նաև Սարակապին, մի հուշարձան, որը, ըստ երևույթին անհրաժեշտ չափով դեռ չի ուսումնասիրված, ու դեռ չեն հասկացված նրանում տեղ գտած շինարարական, թույլատրելի է ասել «ծամածռությունների» առիթները, մինչ նույն հետազոտողի կողմից այս վերջինիս կառուցումը նույնպես տարվում է Ավանի կառուցման նախորդ շրջանը:

Մոխրենիսի Օխտը դռնի եկեղեցու ավագ խորանի գմբեթարդ ծածկի եզրակամարի վրա՝ նրա երկու կողմերի շարվածքի մնացորդների դիտարկումը ցույց է տալիս, որ գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթի բոլորակին իրականացվել է առագաստային (ոչ տրոմպային) եղանակով: Այս դեպքում հնարավոր է դառնում ենթադրել, որ գմբեթակիր կամարների վերևում՝ գմբեթի հիմքի բարձրության վրա, եղել է պարզ կողադեմով գոտի, ինչպես Ավանի արևելակողմի բոլորակ հիմքով ավանդատներում է. և ապա, գմբեթային փոխանցման առագաստի վրա չծանրանալով, գմբեթաթմբուկի պատերը ապահովաբար հետ են դրվել գմբեթատակ բոլորակի եզրերից, հակառակ դեպքում այդ պատերը իրենց հաստության զգալի մասով ու ողջ քաշով ծանրանում են թույլ սյուների և առագաստների վրա, գրեթե «կախվելով» օդում:

Հնարավոր է նաև մտածել, որ գմբեթաթմբուկը եղել է ոչ թե բազմանիստ՝ միաչափ, կամ տարբեր լայնքի նիստերով, այլ հիմքում բոլորակ, այնպես, ինչպես եկեղեցու ստորին ծավալներն են. դրանով իսկ ապահովված է եղել տաճարի ամբողջականությունը՝ մասերի մոնումենտալ միասնականությունը: Այս ամենը գործածության մեջ ունեցած, գրեթե անմշակ քարերով պետք է որ իրականացված լինի բավական դյուրին: Թերևս հենց այս հանգամանքով էլ բացատրվի այն, որ խորանների պատերը ևս

արտաքուստ ստեղծվել են բոլորակ, և ոչ բազմանիստ, զի վերջինիս անկյուն կազմող մասերը դժվար են իրականացվում անմշակ-անձև քարերով:

Մոխրենիսի «Օխտը դռնի» եկեղեցու քննությունը ակամայից հիշեցնում է «Անգեղակոթում գտնված գմբեթավոր եկեղեցու մանրակերտը» վերտառությամբ Ա. Երեմյանի մոտ մեկ տասնամյակ առաջ հրատարակած աշխատությունը[24]: Հետազոտողը մանրակերտի բազմակողմանի դիտարկմամբ ստեղծում է այն եկեղեցու վերակազմությունը, որին ներկայացնում է մանրակերտը: Համաձայն այդ վերակազմության եկեղեցին պատկանել է Ավան-Հռիփսիմեի տիպի կառուցվածքներին՝ խաչաձև դասավորված չորս խորաններ, նրանց միջև ¾ խորշեր, առանց ավանդատների:

Մեզ այժմ չի զբաղեցնում գիտնականի ձեռք բերած արդյունքի հավանականությունը. այստեղ կարևորն այն է, որ աշխատության հեղինակը ենթադրությամբ երբեմնի գոյություն ունեցած այդ շինությունը տանում է Ավանին նախորդող շրջանը, հետամուտ լինելով Ավան-Հռիփսիմեատիպ տաճարների ծագումնաբանական հարցի պարզաբանմանը: Նա ըստ էության այդ՝ առանց ավանդատների կառուցվածքը որակում է որպես տվյալ տաճարների նախօրինակ, որի հետ նույնպես չի կարելի համաձայնել:

Չի կարելի համաձայնել նաև Դ. Ա. Ախունդովի հետ, որ հայ ժողովրդի բուն օրրանում՝ պատմական Արցախում (Հադրութի շրջան) կառուցված տաճարը[25] համարում է աղվանական-ադրբեջանական, դրա համար չունենալով ո՛չ հիմք, ո՛չ ապացույց և ո՛չ էլ գիտնականի ու քաղաքացու բարեխղճություն:

---

[24] Ա. Երեմյան, Անգեղակոթում գտնված գմբեթավոր եկեղեցու մանրակերտը, *Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 10*, Երևան, 1976, էջ 71-84:

[25] Д. А. Ахундов, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, էջ. 211.



***Գծ. 1*** *- «Օխտը դռնի» եկեղեցու ճակատը և հատակագիծը (վեր. ՝Տ. Մարությանի)*